ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
14, հոկտեմբեր ,2026
№ Դ-7/26

Երևանի քաղաքապետ
պարոն Տիգրան Ավինյանին
Հայաստանի շնորհապետական կուսակցության
նախագահի մամուլի խոսնակ՝
Մերի Աբելյանից

Դ Ի Մ Ո Ւ Մ

Հարգելի պարոն քաղաքապետ,

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հայաստանի շնորհապետական կուսակցությունը տեղեկացնում է ս.թ. հոկտեմբերի 18-ին՝ 16:00 – 21:00 ժամանակահատվածում անցկացվող հավաքի մասին:

Հավաքի սկզբնական վայրը՝ Երևանի Հաղթանակ կամրջի հարևանությամբ (ք. Երևան Արգիշտի փ. 9/1 հասցեին հարակից՝ հստակ վայրը վիդոֆայլով կցված է ներքևում):

Ժամը՝ 18:00- ից սկսված նշված վայրից քայլերթով կշարժվենք դեպի «Մերիդիան» էքսպոկենտրոնին հարակից տարածք, որտեղ էլ 21:00- ին կավարտենք մեր հավաքը:

Հավաքի նպատակը՝ ջերմ ընդունելության արժանացնել COP 17 միջազգային համաժողովի մասնակիցներին, հղել ողջույնի խոսքեր, բևեռել ուշադրություն մեզ հուզող հարցերի շուրջ, հայտնել սատարման պատրաստակամություն:

Մասնակիցների ակնկալվող թիվը՝ 80 հոգի:

Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելու են հետևյալ առարկաները կամ տեխնիկական միջոցները՝

1. Հայաստանի Հանրապետության դրոշներ,
2. Եվրոպական Միության դրոշներ,
3. Հայաստանի շնորհապետական կուսակցության դրոշներ,
4. Անգլերեն գրառումներով պաստառներ (ներկայացված են կից ֆայլերում)

Հավաքի կարգադրիչները երեքն են:

Հավաքի մասին իրազեկող դիմումին կից ներկայացնում ենք կազմակերպչի՝ Նորայր Գազազյանի անձնագրի տվյալները (կցելով փաստաթղթի պատճենը), հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները:

Սույնով խնդրում ենք ի գիտություն ընդունել հավաքի անցկացման իրազեկումը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Հայաստանի շնորհապետական կուսակցություն
լիազորված անձ՝ Մերի ԱԲԵԼՅԱՆ

+374 99 152 525 meryabelyan@gmail.com